

ՀՏԴ 82-9

Հայ գրականություն

Նարինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԱրՊՀ գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, ք. գ. թ.

E-mail: nare-luys@mail.ru

ԿՈՐՈՒՍՅԱԼ ԾՆՆԴԱՎԱՅՐԻ ԵՐԱԶԱՅԻՆ ԵՎ ԱՌԿԱ ՎԵՐԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ԿԱՐՈՏԻ ԱՐԶԱԿՈՒՄ. ՇԱՎԱՐՇ ՆԱՐԴՈՒՆԻ, ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿՅԱՆ

Հոդվածում քննվում են կորուսյալ իրականության երազային և առկա վերընկալումները Շավարշ Նարդունու և Բենիամին Նուրիկյանի ստեղծագործություններում: Նարդունու ստեղծագործական աշխարհայացքի ամենաբնորոշ հատկությունը երազն է, հոգեբանական որոնումը, տարագրության մեջ հայրենականի հայտնաբերման հոգևոր ձգտումը, ինչը և դառնում է աքսորը իմաստավորելու ներքին միտում: Վերհուշի մեջ առարկայացող հեռավոր ծննդավայրը Նարդունու գեղարվեստական աշխարհում կյանքի կորուսյալ դրախտն է, առօրյա ընթացքն ու հոգեբանական անհանգրվանությունը լցնող հոգևոր եզերքը: Իրականության մեջ կորուսյալ հեքիաթի վերագտնումը՝ որպես հոգեբանական անվերջ որոնում, դառնում է Նարդունու կարոտի արձակի ներքին շարժիչ ուժը:

Հետվում թողլքված արևմտահայ գյուղի ոգեղեն պատկերը Բենիամին Նուրիկյանը վերստեղծեց իրապաշտական գեղագիտության սկզբունքներով՝ շարունակելով արևմտահայ ռեալիստական փոքր արձակի ավանդույթները, միաժամանակ պահպանելով իր ստեղծագործական ինքնատիպությունը, տեսածի ու զգացածի անհատականությունը: Նուրիկյանի արձակը սփյուռքահայ կարոտի գրականությունը համալրում է մի նոր գեղագիտությամբ, որ գալիս է ի՛ր իրականությունից՝ այդ իրականության մեջ հայտնաբերելով բանաստեղծականությունը և բանաստեղծականության մեջ չկորցնելով իրականությունը:

Բանայի բառեր՝ կորուսյալ ծննդավայր, տարագրություն, բանաստեղծական արձակ, խոսքի զգացմունքային խտություն,

վերելու, հոգեբանական որոնում, գաղափարապաշտություն, իրապաշտություն:

Н. Оганесян

**ПРИЗРАЧНОЕ И РЕАЛЬНОЕ ПЕРЕВОСПРИЯТИЕ
ПОТЕРЯННОЙ РОДИНЫ В ЗАПАДНОАРМЯНСКОЙ
НОСТАЛЬГИЧЕСКОЙ ПРОЗЕ: ШАВАРШ НАРДУНИ,
БЕНИАМИН НУРИКЯН**

В статье рассматриваются призрачность и настоящее в перевосприятии потерянной реальности в произведениях Шаварша Нардун и Бениамина Нурикяна. Наиболее характерной чертой творческого мировоззрения Нардуни является мечта, психологический поиск, духовное стремление к выявлению патриотического в хронике, что и становится внутренней тенденцией осмысления изгнания. Отдаленный родной дом, возникший в памяти – потерянный рай жизни в художественном мире Нардуни, заполняющий повседневную рутину и психологические волнения.

Возвращение потерянной сказки в реальность как бесконечный психологический поиск становится внутренней движущей силой ностальгической прозы Нардуни.

Оставленный вдалеке духовный образ западноармянского села Бениамин Нурикян воссоздал по принципам реалистической эстетики, продолжая традиции маленькой западноармянской реалистичной прозы, сохраняя при этом свою творческую оригинальность, индивидуальность увиденного и ощущаемого. Проза Нурикяна пополняет литературу ностальгии армян диаспоры новой эстетикой, исходящей из ее реальности, обнаруживая поэтичность в этой реальности и не теряя реальность в поэтике.

Ключевые слова: потерянная родина, хроника, поэтическая проза, эмоциональная насыщенность речи, воспоминания, психологический поиск, идеализм, реализм.

N. Hovhannisyan

**THE DREAM AND THE PRESENT IN THE PERCEPTION OF
THE LOSS OF FAMILY HOME IN PROSE OF LONGING OF
THE ARMENIAN DIASPORA. SHAVARSH NARDUNI,
BENJAMIN NURIKYAN**

The article deals with the dream and the present in the re-perception of the lost reality in the works of Shavarsh Narduni and Benjamin Nurikyan. The most characteristic feature of Narduni's creative worldview is a dream, a psychological search, a spiritual desire to discover the patriotic in deportation, which becomes an internal tendency to comprehend exile. The remote home that came to mind is the lost paradise of life in the artistic world of Narduni, a caring land that fills the daily routine and psychological unrest. The return of the lost fairy tale to reality as an endless

psychological search becomes the internal driving force behind Narduni's longing prose.

BeniaminNurikyan recreated the spiritual image of the Western Armenian village left in the distance according to the principles of realistic aesthetics, continuing the traditions of small Western Armenian realistic prose, while maintaining his creative originality, the individuality of what he saw and felt. Nurikyan's prose complements the literature of the longing of the Armenians of the Diaspora with a new aesthetics that comes from its reality, revealing poetry in this reality and not losing reality in poetics.

Key words: *lost homeland, chronicle, poetic prose, emotional richness of speech, memories, psychological search, idealism, realism.*

Կորուսյալ իրականության երազային վերընկալումը Շավարշ Նարդունու արձակույթում: Արձակի բանաստեղծական որակ, խոսքի զգացմունքային խտությունն ու ոգեշունչ ընթացք. ահա այն հիմնական հատկությունները, որ բնորոշում են Շավարշ Նարդունու ստեղծագործության ընդհանուր դիմագիծը: Նարդունու շնորհիվ հայ գրականության մեջ արձակ բանաստեղծությունն ու հեքիաթը՝ որպես կորուսյալ ծննդավայրի երազային վերընկալման զուգահեռամար ժանրեր, գեղարվեստական նոր հատկանիշներ են ձեռք բերում՝ ազգային ու եվրոպական գեղագիտության համադրությամբ հասնելով ինքնատիպ որակի:

Նարդունու ստեղծագործական աշխարհայացքի ամենաբնորոշ հատկությունը երազն է, հոգեբանական որոնումը, տարագրության մեջ հայրենականի հայտնաբերման հոգևոր ձգտումը, ինչը և դառնում է արքայի իմաստավորելու ներքին միտում. «Նարդունի եղաւ առաջիններէն, որ Սփիւռքն ու Սփիւռքեան կեցութիւնը ընկալեց իբրեւ հայ մարդու մնայուն ԱՔՍՈՐՆ ու ԱՔՍՈՐԱՎԱՅՐԸ, նկատում է սփյուռքահայ գրագետը: -Ապրեցաւ այն կրկնակ գիտակցութեամբ, որ՝

- մէկ կողմէ խուսափում չունի, այլեւ ճակատագրուած է ապրելու Սփիւռքի մէջ, համարկուելու Սփիւռքեան միջավայրին հետ եւ Սփիւռքահայ յ ըլլալու,

- իսկ միւս կողմէ՝ աշխարհի մեծ ու փոքր վայելքներուն, ձանձրոյթներուն, ցաւերուն ու հեշտանքներուն մէջ տեսնելու եւ միշտ փնտռելու հայրենին ու հայեցին՝ իբրեւ ծննդավայր, յիշողութիւն եւ, մանաւանդ, ժառանգութիւն»¹:

Սփյուռքահայության ճակատագրի և հայրենիքի կորստի տագնապահարույց ու ողբերգական հարցադրումները Նարդունին բարձրաձայնեց ոչ միայն գեղարվեստական արձակով, այլև հրապարակագրությամբ՝ բանախոսություններով հանդես գալով նաև սփյուռքահայ տարբեր գաղթօջախներում. «Օտարները երբևիցէ պիտի կարենան հասկնալ թէ ի՞նչ կը

¹ «Ազատ օր», **Նարդունի Շ.**, Սփիւռք կոչուած ԱՔՍՈՐՆ եւ Սփիւռքահայու ՏԱԳՆԱՊԻՆ սրտաբուխ «բաներ»ն ու «մեղեդիներ»ը, 2018, 13 փետրվար:

նշանակել գրագետ դառնալ և իր ժողովուրդին ներկայութեան կարոտն ունենալ: Պատմութեան գրքերը կրնան ցոյց տալ նման կացութիւն մը իբրեւ նախընթաց, ուր կգտնուի հայ գրագետը որ իր ժողովուրդը կը փնտռէ»¹, - ասում է Նարդունին՝ սփյուռքահայության ինքնության պահպանման, կորուսյալ հայրենիքի և ցեղասպանության պահանջատիրության, հայության հավաքական ուժի գաղափարանշման հստակ շեշտադրումներ անելով:

Երազը, որ Նարդունու գեղարվեստական արձակի ներքին առանցքն է, հրապարակագրության մեջ փոխակերպվում է պահանջատիրության: «Մեր հողերը, մեր հողերը» հրապարակախոսական աշխատության մեջ Նարդունին՝ հանդես է գալիս ամբողջական Հայաստանի պահանջատիրությամբ՝ ահագանգելով առկա սպառնալիքները, որոնք վտանգում են սփյուռքահայության ինքնությունը. «Այլապէս, սիրելի հայրենակիցներ, չի՛ դիմանար Հայութիւնը, չի՛ մնար արտասահմանը ընդ երկար: Ես ման եկայ ամբողջ Հայկական Արտասահմանի մեջ, Արեւելքէն Արեւմուտք, ու տեսայ թէ Հայութեան Արեւը մայր կը մտնէր քանի կ'ընթանայի դէպի Արեւմուտք: Եւ այսօր կրնամ ձեզի ասել, թէ աւա՛դ, Արեւմուտքը Հայութեան արեւմուտքն է»²: Ռուս-թուրքական համագործակցության արդյունքում ունեցած մեր ազգային կորուստների հարցադրումներով Նարդունին հանգում է իր գլխավոր ասելիքին. «Բայց անօրինակ ողբերգութենէ մը ետք՝ մոռնալ մեր պատմութեան ձայնը եւ հրճուիլ այն նոր պայմաններով, զորս կը վայելէ արեւելեան հայկական այս անկիւնը, այսօրուան Հայաստանը, անպատիւ ուրացում մըն է, - **արեւմտահայութեան բնաջնջումը կամ արեւմտեան Հայաստանի պարպումը չի կրնար վարձատրուիլ արեւելահայութեան կազմած պետութեամբ**»³ (ընդգծումը Շ. Ն.):

Նարդունու՝ ազգային կյանքի հրապարակախոսական բուռն դատողությունները գեղարվեստական արձակում դառնում են արքութեան հոգու նրբաթախիժ ապրումներ, երբեմն էլ՝ զգացմունքային բռնկումներ: Վերհուշի մեջ առարկայացող հեռավոր հայրենիքը Նարդունու գեղարվեստական աշխարհում կյանքի կորուսյալ դրախտն է, առօրյա ընթացքն ու հոգեբանական անհանգրվանությունը լցնող հոգևոր եզերքը: Իրականության մեջ կորուսյալ հեքիաթի վերագտնումը՝ որպէս հոգեբանական անվերջ որոնում, դառնում է Նարդունու կարոտի արձակի ներքին շարժիչ ուժը: Երազը՝ հոգեբանական բոլոր դրսևորումներով, գեղարվեստական տարածություն է ձեռք բերում «Մեղեդիներ, մեղեդիներ» (1933), «Բանէ՛ր, բանէ՛ր, ի՛նչ բաներ» (1942) գրքերում: Կորուսյալ ծննդավայրը այդ գրքերում միաժամանակ և՛ խորհրդածության խորան է, և՛ հոգևոր ներշնչարան ու աղոթարան:

¹ **Նարդունի Շ.**, *Գրագետը, որ իր ժողովուրդը փնտռելու ելած է*, Թեհրան, 1954, «Ալիք» տպարան, էջ 22:

² **Նարդունի Շ.**, *Մեր հողերը, մեր հողերը, Բեյրութ, 1967, «Համազգային» տպարան, էջ 15:*

³ *Նույն տեղում, էջ 17:*

Հոգեկան բռնկման բանաստեղծական պատկերներ են «Հաւ մը կ'երգէր», «Օոցիկը-բաց», «Հարսին աղբիւրը» ստեղծագործությունները, որոնց մեջ անդրադարձվում է կորուսյալ ծննդավայրի՝ Արմաշի երազային պատկերը. «Ահա, մեր լեռներն են, պարուրուած մշուշի մը մէջ, որ պատրանքը կուտայ աղջկան մը մերկութեան: Ահա, մեր ջուրերն են, որ ջահերու նման կը փշուրին բլուրներն ի վար....

Մեր տունէ՛րը, ճերմակ ծեփով ու կարմիր տանիքներով, վարդաշատ փեղկերով ու առատողկույզ սարփինայով, մեր տունէ՛րը, մանանայի պէս սպիտակ ծուխով եւ երկինքի պէս կանանչ գոտիով....

Ո՞վ խլեց մեզմէ այս հրաշալի կեանքը»¹ («Հաւ մը կ'երգէր»):

Նարդունու արձակ բանաստեղծություններն ու հեքիաթները հատկորոշվում են նաև նրանով, որ նրանց մեջ առօրյա երևույթը դառնում է կորուսյալ ծննդավայրի կամ հայրենիքի վերհուշի ու ոգեկոչման ազդակ: Առօրեականի ու հոգեկանի, աքսորի և ծննդավայրի գուգորդությունները՝ արտաքին նմանության և ներքին հակադրության ընկալումներով, գեղարվեստական ուրույն պատկերների են վերածվում «Վարունգով խնջոյք», «Հաւ մը կ'երգէր», «Ես ի՛նչպէս կու՛տեմ դեղձը», «Կուտը ձեռքս մնաց» և այլ ստեղծագործություններում: Տարագրության մեջ հավի ձայնը, վարունգը կամ դեղձը դառնում են հոգեկան բռնկման առիթ՝ արտաժայթքելով աքսորական հոգու խորքում կուտակված կարոտն ու ցավը. «Չկա յ գիւղս, մինչ հոգւոյս մէջ կը վառի կարօտը, որ զիս կը տանի հայրենիքին՝ նոյնիսկ ստամոքսի ճամբով»² («Վարունգով խնջոյք»): «Ո՛ տայր ինձ գծուխն ծխանի» ստեղծագործության մեջ, վերհիշելով աքսորի ճանապարհը, Նարդունին գրում է, որ «Անօթութիւնը եւ թուրքին սարսափը չէին կրնար այնքան խորտակել զիս, որքան կարօտը տունին»³:

Կոտորածի և աքսորի նարդունիական վերապրումներում դիմադարձ են վերագտնում մի ու հայրենադարձի տարակույսն ու հավատամքը. «-Մեռա՛ւ, մեռա՛ւ, իմ ամբողջ գիւղս մեռաւ,- կրկին հիշում է Նարդունին: -Իմ գիւղս ալ ձեզի պէս, ամէն տարի ապրիլ ամսուն, առաւօտեան երկինքին պէս կը փրփրէր ու կը ծաղկէր: Գետերու պէս լերան կանանչութիւնը կը թափէր մեր տուններուն վրայ: Ճամբաները Աստուածամօր ոսկեգօտիին պէս կը փայլէին գիւղին մէջքին: Բայց ապրիլեան այսպէս աղուոր առաւօտ մը բարբարոսը եկաւ, քանդեց գիւղ ու տուն, սպանեց հարսն ու մանուկը, երիտասարդն ու ծերունին...»⁴ («Թագաւորը մեռաւ, կեցցէ թագաւորը»): Ու հեքիաթի նշենին մխիթարում է սգավոր տղային՝ ասելով, որ «կուգայ գարունը, եւ վերստին կծաղկի գիւղը.... Գնա ջրվիժելու ժողովուրդիդ ցանկութիւնները վրիժառու»⁵:

¹ Նարդունի Շ., Բաներ՛, բանե՛ր, ի՛նչ բաներ, Փարիզ, 1942, գրատուն Պարսամեան, էջ 61:

² Նույն տեղում, էջ 25:

³ Նույն տեղում, էջ 187:

⁴ Նույն տեղում, էջ 52:

⁵ Նույն տեղում:

Նմանօրինակ քնարական պատկերներից են «Գիւղիս սուգը», «Երագիս մեջ տեսայ Հայաստանը» և այլն: Օննդավայրի կորստի ցավը, հայրենագրկվածի կարոտախտն ու վերադարձի երագը փոխըացնում են իրար Նարդունու գրվածքներում. «Գիւղիս էրթամ.... Գիւղէն դուրս ելլող ճամբաներուն բերանը, իմ տունս ինծի կը սպասէ»¹ («Գիւղիս սուգը»): Որոշ ստեղծագործություններում երագին փոխըացնում է երդումը, և «Հայաստան, ամէն բանէ վեր» գաղափարը Նարդունու ստեղծագործություններում ձեռք է բերում հանգանակային արժեկշիռ: «Աստուածաշնչական ասեղ երդումով» գրողը մեկ անգամ չէ, որ ուխտ է անում. «-Թող լեզուս քիմքիս կալի ու չդառնայ բերնիս մէջ՝ եթէ ես մոռնամ քեզ, Հայաստան»² («Երագիս մէջ տեսայ Հայաստանը....»): Աստվածաշնչան այդ սաղմոսը նա բնաբան կարգեց նաև «Գիւղիս սուգը» արձակ բանաստեղծությունը, երդումի և ուխտի խոսքը հնչում է այլ գործերում ևս:

Այսպիսով՝ կարոտն ու ցավը, երագն ու ուխտը դառնում են Նարդունու գեղարվեստական արձակի հիմնական շաղախը, որի շուրջ կառուցվում է խոսքի էմոցիոնալ ընթացքը:

Կորուսյալ իրականության առկա վերընկալումը Բենիամին Նուրիկյանի արձակում: Հեռվում թողլոված արևմտահայ գյուղի ոգեղեն պատկերը Բենիամին Նուրիկյանը վերստեղծեց իրապաշտական գեղագիտության սկզբունքներով՝ շարունակելով արևմտահայ ռեալիստական փոքր արձակի ավանդույթները, միաժամանակ պահպանելով իր ստեղծագործական ինքնատիպությունը, տեսածի ու զգացածի անհատականությունը: «Այգեկութք» (1937), «Պանդուխտ հոգիներ» (1958), «Կարոտ հայրենի» (1978) գրքերում Նուրիկյանը նկարագրական արվեստով վերակենդանացնում է կորուսյալ ծննդավայրը՝ Խարբերդի Հյուսեյնիկ գյուղը՝ իրական պատկերներով և իրական հերոսներով ներկայացնելով այն կյանքի հարականոն ու բազմաշարժ ընթացքի մեջ:

Նուրիկյանի արձակը սփյուռքահայ կարոտի գրականությունը համալրում էր մի նոր գեղագիտությամբ, որ գալիս էր իր իրականությունից՝ այդ իրականության մեջ հայտնաբերելով բանաստեղծականությունը և բանաստեղծականության մեջ չկորցնելով իրականությունը: Ահա գյուղանկարի դրվագներից մեկը, որով հասկորոշվում է Նուրիկյանի արվեստը. «Գիշեր է դեռ. ամառ գիշեր: Ծորիթները կ'երգեն, գորտերը կը կոկոսն մէկ բերնով, մէկ եղանակով: Գիշերահաւը կուլայ մերթ ընդ մերթ: Եւ գիւղը իր հողէ տանիքներուն վրայ՝ լուսունկային պաղած աչքին տակ՝ անուշ-անուշ կը քնանայ:

Դէմ-լուսուն՝ աքաղաղին կանչն է որ սուր դանակի մը պէս գիշերին կողը կը պատռէ յանկարծ: Մութը կամաց-կամաց իր սեւ թելերը կը վերցնէ գետնին երեսէն: Ծորիթները կը լռեն մեքենաբար, գորտերը կը պապանձին: Գիշերեհաւը կը կտրէ իր ապուշ լացը եւ ծառի մը մութ խոռոչին մէջ կը ծուարի, կը քնանայ:

¹ *Նարդունի Շ., Մեղեդիներ, մեղեդիներ, Փարիզ, 1933, էջ 70:*

² *Նարդունի Շ., Բաներ, բաներ, ինչ բաներ, էջ 96:*

Աքլորը կը կանչէ նորէն, այս անգամ աւելի ուժով, աւելի երկար ու գալարուն ձայնով մը:

Ի՞նչ հրաշք է արդեօք, որ արքորին լեզուն հեռաւոր արեւին հետ կը կապէ:

- Կուգա՛մ, կը փսփսայ արեգակը:

- Հրամմեցէք, կը պատասխանէ արքադադը:

- Բարի լոյս, բարի Քրիստոս, կը մրմնջեն գեղջուկ բերաններ»¹ («Գիւղի ձայներ»):

Գյուղը Նուրիկյանի արձակում ոչ թէ անհետացած եզերք է՝ առարկայական ու հոգևոր իմաստով, այլ ապրող և կյանքի շարժման մեջ կերպավորվող ինքնակա գոյություն: Այս տեսանկյունից ուշագրավ է, որ գեղարվեստական ժամանակը Նուրիկյանի գյուղանկարային արձակում ոչ միայն հիշողության խորքերից բացվող անցյալն է, այլև շարունակական ներկան: Նաև այստեղից այն անմիջականությունն ու կենդանությունը, շարադրանքի անպաճույճ եղանակը, որոնցով բնորոշվում է Նուրիկյանի արվեստը: Բնորոշ մի պատկեր է «Թուփդ դալար» պատմվածքը. «Խաչ է. այգեկութքին հին տօնը: Գեղն ամբողջ, մեծով-պզտիկով, փեշերը գօտին զարկած՝ այգեստան կը վազէ: Այգիները, ուր ամառն ամբողջ պահպանին մենաւոր կանչը՝ արձագանգեր է ազատ, նոր կեանքով կը խայտան հիմա: Հոն՝ բաց արեւին տակ՝ քրտինքոտ աշխատանքն ու սրտաբուխ վայելքը թեւ թեւի տուած կը պարեն....

Հոս՝ քանի մը տղաք նապաստակ մը կը հալածեն: Անասունը, սարսափէն մտրակուած, ականջները ցից՝ եւ անհաւասար սրունքներուն բոլոր ուժն ու ճկունութիւնը լարած՝ բլուրն ի վեր կը սուրայ ճինի պէս, կամ ձորի մը յատակը կը գլտորուի շուարած»²:

Մարդու և բնաշխարհի անխաթար համակեցություն, գյուղական կյանքի արտաքին խճանկարներ, մարդկային տեղական հոգեբանության մանրապատկերներ՝ առանց խորքային բացահայտումների, կտրուկ ու սրընթաց եղանակով: Նուրիկյանի արձակը գրեթե չունի սյուժեի զարգացման ընթացք, պատմվածքը կամ մանրապատումը առավելապես միտված են ստեղծելու գյուղի և գյուղաշխարհիկ կյանքի խոսուն պատկերը, այդտեղ գրեթե չկան նաև կերպարներ, կան գերազանցապես հերոսներ, ովքեր ամբողջացնում են գյուղի և գյուղացու ազգային հոգեբանության դիմապատկերը: Պարզ ու բնաբուխ, բայց միշտ պատկերավոր ու գունագեղ ոճով Նուրիկյանը հայրենի գյուղը կենդանագրում է պատանեկան տպավորությունների հետադարձ ու հասուն վերընկալումներով՝ բոլոր դեպքերում պահպանելով պատկերի կամ երևույթի իսկատիպությունը: Ահավասիկ մի պատկեր «Հայրենի կաղանդ» պատմվածքից. «Կաղանդին օրը գյուղը անպատճառ նոր հարսի պես ճերմակ կը հագներ, ճեփ-ճերմակ: Հարթ ու ցածկեկ տանիքները մինչև իրենց պոկունքը ձյունի թանձր,

¹ *Նուրիկյան Բ., Այգեկութք, Նյու Յորք, 1937, էջ 84:*

² *Նույն տեղում, էջ 88:*

միակտուր վերմակներ կը քաշեին.... Ծառերն ու թուփերը ձյունով ու եղյամով կը ծածկվեին, նոր ձևեր կառնեին ու կաղվորանային, կը մեծնային.... Իրիկունը ամեն տուն կաղանդի ճոխ սեղան մը կը շտկեր տաքուկ քուրսիին կամ թոնրին վրա, որուն շուրջ կը բազմեին բոլոր տներցիք: Տանտիկիներ, միշտ ոտքի վրա, գլուխը քերելու ատեն իսկ ունեցած չէր էն օրը: Տուն-տեղ ավլեր, շտկեր էր: Բայց կաղանդի սեղանին պատրաստությունը իր մեծագույն հոգն եղած էր: Հոն, սեղանին վրա էին մառանին բոլոր բարիքները, զոր աշունը ի՛նչ խնամքով տեղավորեր էր հողե պուտուկներու և մեծփոր բոդոններու մեջ»¹:

Գյուղանկարներ ու բնապատկերներ, հայրենի տան հարկի ներքո հասակ առնող մանկություն և մանկան աշխարհընկալման պայծառ աչք, ազգային տոներ ու ավանդույթներ, գյուղական կենցաղ, կալ ու աշխատանք, լեռներ ու աղբյուրներ, դաշտ ու արտ, դպրոց և եկեղեցի, գյուղական շուկա. ահա մանրամասների մեջ ամբողջացող գյուղի համապատկերը, և ինքը՝ գրողը՝ որպես այդ ամենի մասնիկ: Ապրող գյուղի գեղարվեստական համապատկերը միայն մի քանի տեղ ձեռքովում է կոտորածի և կորուստի ապրումներով («Ու ը գարնեմ բահս...», «Ծակ դույլը», «Ոստ մը միայն», «Աղբյուրները»): «- Բահդ ժի՛ր գարկ, տղաս,- կըսե հայրս, եղանակով մը, որ ցավոտ է և բամբակին կակդությունն ունի: - Բահդ ժի՛ր գարկ: Մեծ հայրդ մինակ չէ այս հողին տակ: Գյուլխասենց Պետրոս աղբոր հետ մեկտեղ թաղեցինք զինք, 95-ի դեպքին....

Հայրս՝ մեկ կողմ դարձած՝ իր աչքերուն թացությունը կը շփե դողացող մատվրներով, մինչ ես ճակտիս քրտինքին դեռ խոնավ հետքերը կը սրբեմ զպունիս թևովը: Ու գետնին խոտը սեփ-սև կերևա աչքերուս....

Մեռելներուն նոր օրն է այսօր: Արևին հետ դուրս կը թռիմ անծանոթ գերեզմաննոցի մը կարոտեն մտրակված: Ըսե՛, հա՛յր, բահս ու՛ր գարնեմ այս անգամ, և ու՛ր տնկեմ թուրթի մատղաշ շթիլ մը, որուն շուքը քու և մորս մասունքին վրա իյնա»²:

Ահավասիկ երկու պատկեր ևս՝ անհետացած գյուղի հեռավոր հիշատակների կարոտի ու ցավի առթումով. «Կըսեն ինձի՝ թե մեր թաղին աղբյուրը, զինք հոգացող ձեռքերեն զրկված, իր վերջին արցունքը լացեր ու ցամքեր է ճարահատ: Բայց Տևե տամին իր զույգ աղբյուրներով կը հոսի դեռ, գյուղացիին համբերանքին պես անսպառ...»³ («Աղբյուրները») կամ «Կը պատմեն ինձի թե հայրենի տանս ավերակներուն վրա մեր հին որթատունկն է, որ, միս-մինակ ու գլխահակ, իր մեկնող սիրելիներուն անվերադարձ բաժանումը կը սգա ու փախչող հովերուն իր ցավազին զրկանքն ու կարոտները կը փսփսա հիմա...

¹ *Նուրիկյան Բ., Պանդուխտ հոգիներ, Ե., Հայպետհրատ, 1958, էջ 89, 92:*

² *Նույն տեղում, էջ 70, 71:*

³ *Նույն տեղում, էջ 97:*

Ու ինձի, տարագրի տխուր մենությանս մեջ, տղայությանս կորսված օրերեն չոր ոստ մը միայն կա ու կը մնա որպես իրական, անգին հիշատակ»¹ («Ոստ մը միայն»):

Թախիժն ու կարոտը՝ որպես ներքին շարժիչ ուժ, ինչպես նկատեցինք, Նուրիկյանին տանում են անհետացած գյուղը ոչ թե ռոմանտիկական, այլ ռեալիստական արվեստով կենդանագրելու ճանապարհով: Առաջին իսկ ստեղծագործություններից սկսած՝ ծննդավայրը բացվում ու աստիճանաբար ամբողջանում է պատմվածքի, նորավեպի և մանրապատումի ժանրերով, գյուղի և գյուղացու կյանքի մանրապատկերներով: Գյուղը՝ իր ներքին կյանքով, մի կողմից, տարագրության միջավայրը՝ մյուս կողմից, դառնում են Նուրիկյանի գրական աշխարհի դիմադարձ ասիերը, որոնց միջև արևմտահայ մարդն է՝ իր հոգեաշխարհով ու կենսակերպով: Պանդխտության դրամատիզմի սրտահույզ պատկերներ են «Հեղ մըն ալ կարդա», «Մարդիկ, հասարակ մարդիկ», «Կաթիլ մը յուղ Մ. Մեսրոպեն», «Հաճի մայրիկ» պատմվածքները, որոնց մեջ հոգեբանական ներթափանցումը և ապրումը գերազանցում են նկարագրական պատկերին:

Ինչի մասին էլ գրում է Նուրիկյանը, գրում է պարզ ու թեթև, սեղմ ու դիպուկ ոճով, գունեղ նկարագրականությամբ: Ժամանակային ու տարածական հեռավորությունը անհետացած աշխարհի տպավորություններից ջնջում է առօրեական գույներն ու գծերը, և ամեն ինչ պատկերանում է անսովոր պայծառությամբ. «Նուրիկեան ինքնություն է,- նկատում է սփյուռքահայ քննադատ Հ. Գույումջյանը,- անոյշ ոճով մը որ արելին տակ հասունցած պտուղներու համն ունի: Պարզ ըլլալու առաքինությունը միակ շնորհը չէ իր լեզուին: Հակառակ իր համեստ ու անպաճոյճ տարազին իր գրականությունը լեցուն է ըզմայլելի խորհուրդներով ու գիտերով: Նուրիկեան գիտէ իր ընթերցողները առաջնորդել անկոխ ճամբաներէ ու զանոնք դնել անակնկալներու առջէն»²:

Նուրիկյանի գեղարվեստական աշխարհը՝ կարոտի և հիշողության մեջ վերապրող ծննդավայրի կերպավորման արվեստով ու բնաշխարհիկ կենսահայացքով, հարազատության եզրեր ունի Համաստեղի և Բակունցի ստեղծագործական աշխարհայացքի ու գեղագիտության հետ: Սակայն պետք է նկատել, որ Նուրիկյանի արձակը պատերակերտման և աշխարհընկալման առումով չի հասնում այն նվաճումներին, որոնք առկա են Բակունցի և Համաստեղի արվեստում: Ահա բնորոշ մի պատկեր՝ համաստեղյան ու Բակունցյան հարազատության եզրերով. «Գարուն է. իմ գյուղիս գարունը. չոր քարերն անգամ կանանչ խոտ մը կը կրեն կուրծքերնուն վրա: Բնության հետ գյուղն ալ կարթըննա, աչքերը կը ճմրթկե ու նոր սրտով իր նոր աշխատանքին կը լծվի: Դաշտ ու այգի բաց գիրկով կողջունեն գյուղացին և իրենց լեցուն ծոցին բերքն

¹ Նույն տեղում, էջ 169:

² Գույումջյան Հ., Բենիամին Նուրիկեան եւ հայ գրականությունը, «Արև», Կահիրե, 1949, 20 օգոստոսի, թ. 9327:

ու բարիքը կը շռայլեն անոր: Ի՞նչ սրտաբուխ նվիրում է այս, որ Նոյի օրերեն ասդին հողն ու մարդը իրարու կը կապե, կը նույնացնե»¹ («Գյուղանկար»):

Ահավասիկ մի պատկեր ևս, երբ պատկերային համեմատության հիմքը դարձյալ մարդու և բնաշխարհի միասնական գոյության աշխարհըմբռնումն է. «Գետնեն թեթև գոլորշի մը կը բարձրանար. հողն էր որ կարտաշնչեր կարծես քնեն նոր արթնցող հսկա գոմեշի մը պես»² («Եթե կաթողիկոս ըլլայի»):

Գեղարվեստական ընդհանրություններ կարելի է նկատել նաև Նուրիկյանի, Թյկատինցու և Ռուբեն Զարդարյանի ստեղծագործությունների միջև: Առաջին պարագայում դա անշպար բնականությունն է, խորհրդածական և իմաստասիրական խորասուզումների ձգտման բացակայությունը, խոսուն նկարագրականությունը, երկրորդ պարագայում՝ ոճի հղկման բծախնդրությունը: Բոլոր դեպքերում, սակայն, Նուրիկյանը պահպանում է ստեղծագործողի իր անկախությունն ու ինքնատիպությունը:

Նուրիկյանի կարոտի արձակում ևս, ինչպես Նարդունու մոտ, կա կորուսյալ ծննդավայրը վերագտնելու ճանապարհի հույսը: Հույսը դառնում է ճանապարհի վերջնակետ՝ անկախ կորուսյալ իրականության երազային և առկա վերընկալումներից. «- Արդյոք օր մը պիտի տեսնե՞մք Հայաստանը, իրական Հայաստանը:

- Պատերազմեն հետո, երբ դուռները բացվին մեր երկրին, ու մեր հողերը լայննան... Պատերազմեն հետո»³ («Պանդուխտ հոգիներ»):

Գրականություն

1. «Ազատ օր», 2018, 13 փետրվար:
2. **Նարդունի Շ.**, Գրագետը, որ իր ժողովուրդը փնտռելու ելած է, Թեհրան, 1954, «Ալիք» տպարան:
3. **Նարդունի Շ.**, Մեր հողերը, մեր հողերը, Բեյրութ, 1967, «Համագգային» տպարան:
4. **Նարդունի Շ.**, Բաներ՝, Բաներ՝, Ի՞նչ բաներ, Փարիզ, 1942, գրատուն Պարսամեան:
5. **Նարդունի Շ.**, Մեղեդիներ, մեղեդիներ, Փարիզ, 1933:
6. **Նուրիկյան Բ.**, Այգեկութք, Նյու Յորք, 1937:
7. **Նուրիկյան Բ.**, Պանդուխտ հոգիներ, Ե., 1958, Հայպետհրատ:
8. «Արև», Կահիրե, 1949, 20 օգոստոսի, թ. 9327:

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական խորհրդի անդամ, ր.գ.դ. Ս.Ա.Խանյանը:

¹ **Նուրիկյան Բ.**, Պանդուխտ հոգիներ, էջ 76:

² Նույն տեղում, էջ 106:

³ Նույն տեղում, էջ 212: